

Մարտ 31ի պատահարներու ատեն Պոլսոյ մէջ Հայերը պատրաստ էին իրենց կեանքին գինովը պաշտպանելու Սահմանադրութիւնը : Ատանայի , ինչպէս ամբողջ կայսրութեան մէջ , Հայերու ընթացքը միեւնոյնը եղած է : Ինչպէս — առ ի չդոյժ ապացոյցի — կարելի չէ եղած գտնել փաստ մը՝ որ կարենար ենթադրել տալ թէ Հայերը կը սնուցանէին հայրենասիրական զգացումներու հակառակ դադափար մը , այսինքն անջատողականութիւն . բան մը որ , մանաւանդ հրապարակաւ զնուած զէնքեր՝ չէին կրնար վերագրուիլ յետին նպատակներու : Եթէ Հայերը Օսմ. Հայրենիքին հանդէպ գէշ զիտումներ սնուցած ըլլային , անոնք , Պոլսոյ դէպքերու ընթացքին , չպիտի նուիրուէին այնքան կատարեալ անձնուրացութեամբ և վեհանձնութեամբ՝ Սահմանադրութեան պաշտպանութեան և կարգի պահպանութեան համար , հակառակ այն մոլեգին վիշտին՝ զոր Ատանայի դէպքերը արթնցուցած էին անոնց սրբտին մէջ :

Կը կարծեմ թէ ամէն անկողմնակալ Օսմանցի զայրոյթ պէտք է զգայ Հայերու ցոյց տուած ուղիղ և օրինաւոր վարմունքին ի վնաս՝ անոնց հանդէպ ներսուած դարշելի զրպարտութիւններէն :

Օսմանիէ , Համիաիէ , Թարսուս , Չորք-Մարզուան , Հաճըն և այլուր , դէպքերը պատահած են — համեմատութիւնները պահելով — միեւնոյն եղանակաւ : Յեջիւրածոյ սուտերը և Հայերու վերագրուած արուեստական խռովութիւնները և յարձակմանց կեղծ իրարանցումները՝ միեւնոյն վաճառանիշը կրող տպրանքներ էին :

Օրինակի համար , Սասնի պէյ , Ճէպէլի-Պէրէքէթի կառավարիչը , Սպրիլ Չին հեռադրած է կուսակալութեան և Օսմանիէի դայմագամութեան թէ՛ անհիմն է Չորք-